ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# «ԴՈԿՏՈՐ ՍԱՆՋԱՅ» ՈՒ «ՄԱՅՐԱՄՈՒՏ» ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



*«Հայարտուն» մշակութային կենտրոնում կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության եւ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի միջնորդությամբ լույս ընծայված Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամներ, թբիլիսցի Սերգեյ Առաքելյանի «Դոկտոր Սանջայ» եւ նինոծմինդացի Հովհաննես Մարիկյանի «Մայրամուտ» չափածո ժողովածուի շնորհանդեսը:*

Երեկոն բացեց կենտրոնի մշակույթի բաժնի համակարգող Լեւոն Չիդիլյանը, վարեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը: Վերջինս հանգամանորեն ներկայացրեց Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ, «Վրաստան» թերթի երկամյա լրագրող, չորս գրքերի հեղինակ Ս.Առաքելյանի եւ Նինոծմինդայի շրջանի Հեշտիա գյուղի բնակիչ, մանկավարժ ութ գրքերի հեղինակ Հովհաննես Մարիկյանի ստեղծագործական ուղին:

Հեղինակներին շնորհավորանքի խոսք եւ բարեմաղթանքներ հղեցին «Կամուրջ» գրական-մշակութային հասարակական կազմակերպության նախագահ, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Նինոծմինդայի «Արշալույս» թերթի խմբագիր Մանուկ Կարախանյանը:

Շնորհավորելով գրքի հեղինակներին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը գնահատանքի խոսքեր ուղղեց նաեւ ՀՀ սփյուռքի նախարարությանը, Գ.Գյուլբենկյան հիմնադրամին, որոնք սիրով աջակցում եւ հովանավորում են Թեմի նախաձեռնություններին:

Երախտիքի իրենց խոսքում Սերգեյ Առաքելյանն ու Հովհաննես Մարիկյանը շնորհակալություն հայտնեցին գրքերի հրատարակմանը աջակից «Հայարտուն» կենտրոնին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, գրքերի խմբագիր Գ.Սնխչյանին եւ նրանց վրա աշխատած մնացյալ ողջ անձնակազմին:

Գրողների «Վերնատուն» վարչության անդամ, վաստակաշատ մանկավարժ Ռոզա Զոհրաբյանի ղեկավարությամբ, ասմունքի, երգի, պարի շնորհալի կատարումներով մասնակցեցին Թբիլիսիի թիվ թիվ 104, 103, 132 դպրոցների աշակերտները, թիվ 104 դպրոցին կից «Վանք» պարային համույթը (պարուսույց` Լիանա Կաշավանիձե), ինչպես նաեւ երգիչներ Նինա Կարապետյանը եւ Հենրիխ Պետրոսյանը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԸ

*Դեկտեմբերի 6-ին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան կազմակերպեց` «Ընտանեկան բռնության մասին օրենքը. Վրաստանի հաջողված փորձը» խորագրով հանդիպում:*

Հանդիպմանը հրավիրված էին Վրաստանի ներքին գործերի նախարարության պարեկային բաժնի ներկայացուցիչ, պարեկային տեսուչ Նինո Գվինիանիձեն եւ «Ընդդեմ բռնության» Վրաստանի ցանցի նախագահի Նատո Շավլակաձեն:

Ինչպես տեղեկացրին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայից, վրացի գործընկերները ներկայացրել են «Ընտանեկան բռնության մասին» օրենքի ադվոկացիայի, ընդունման եւ գործարկման իրենց փորձը: Հայաստանի ներկայացուցիչները եւս ներկայացրել են իրենց փորձը եւ վեր հանել այն խնդիրները, որոնց բախվում են իրենց աշխատանքի ընթացքում: Տեղի է ունեցել փորձի փոխանակման հաջողված հանդիպում: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Հայաստանի կառավարության, ոստիկանության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

*Դեկտեմբերի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի բնապահպանության նախարարության ղեկավար անձնակազմի մասնակցությամբ անցկացրեց խորհրդակցություն:*

Հանդիպմանն իրենց համակարգման ոլորտում գտնվող ուղղություններով իրականացված աշխատանքների, առկա խնդիրների ու հետագա ծրագրերի մասին երկրի ղեկավարին զեկուցել են Բնապահպանության նախարարը, նախարարի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը եւ Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետը:

Զեկույցները լսելուց հետո, նախագահը հարցեր է ուղղել դրանք ներկայացնողներին եւ պատրաստակամություն հայտնել պատասխանել խորհրդակցության մասնակիցներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերել են ոչ միայն նախարարության գործունեության շրջանակներին:



# ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՆՈՐԱՑՎՈՒՄ Է

*Եվրամիության եւ Հայաստանի միջեւ համագործակցության խորհրդի 14-րդ նիստի ընթացքում գծագրվել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա ուղու նոր բովանդակությունը:*

Այս մասին հայտարարել է ԵՄ ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն` դեկտեմբերի 9-ին Բրյուսելում կայացած ԵՄ-ՀՀ համագործակցության խորհրդի նիստին հաջորդած մամուլի ասուլիսում: «Նախորդ նիստի համեմատ այս քննարկումն ակնհայտորեն այլ բովանդակություն ուներ` պայմանավորված Հայաստանի միջազգային նոր հանձնառություններով: Այս լույսի ներքո, մենք վերահաստատել ենք երկկողմ հարաբերությունների հիմքերը վերանայելու, ինչպես նաեւ եվրոպական հարեւանության քաղաքականության Հայաստանի գործողությունների ծրագիրը թարմացնելու անհրաժեշտությունը` դրանք համապատասխանեցնելով մեր հետագա համագործակցության չափերին եւ հավակնություններին»,- հայտարարել է ԵՄ հանձնակատարը:

Եվրամիությունը ողջունում է կողմերի միջեւ շարժունակության ոլորտում արձանագրած առաջընթացը, Հայաստանի կատարած բարեփոխումներն ու երկրի հանձնառությունը` շարունակելու այդ ուղին:

«Հայաստանը կարող է ապավինել ԵՄ շարունակական աջակցությանը` քաղաքական, տնտեսական եւ սոցիալական բարեփոխումները նոր մակարդակի բարձրացնելու գործում եւ բարելավելու մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունը»,- նշել է Ֆյուլեն:

# ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱԴԱՄԱՆԴԻ ԵՎ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՇԱՓԵԼԻ ԱՃ

*Հայաստանում ադամանդների արտադրության ծավալն այս տարվա հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 47,8 տոկոսով եւ կազմել 73 հազար 572 կարատ: Ոսկերչական արտադրանքի ծավալն ավելացել է 15,8 տոկոսով եւ հասել 879.6 կիլոգրամի:*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով` նախորդ տարվա հունվար-հոկտեմբերին Հայաստանում արտադրվել էր 49 հազար 478 կարատ ադամանդ եւ 759.7կգ ոսկերչական արտադրանք: Միայն հոկտեմբերին արտադրվել են 6 հազար 614 կարատ ադամանդ եւ 61 կգ ոսկերչական իրեր: 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ հարված էր հասցրել Հայաստանում ադամանդագործության ոլորտին:

Եթե 2000-ականների սկզբներին ընդհուպ մինչեւ 300 մլն դոլարի ապրանք էր արտահանվում, ապա ճգնաժամի տարիներին հայկական ձեռնարկությունները բավական ծանր վիճակում էին, եւ արտահանումը զգալիորեն նվազել էր: 2011թ. արդեն ոլորտը ոչ միայն դուրս էր եկել ճգնաժամից, այլեւ ավելացնում էր արտահանման ծավալները:

Այս տարվա հունվար-սեպտեմբերին մեր երկրից արտահանվող ադամանդների ծավալն աճել է 58 տոկոսով եւ կազմել 164 հազար 800 կարատ, որի կեսը գնել է Բելգիան:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԹԱՄԱԶ ԱՎԴԱԼՅԱՆ. «Ի՞ՆՉՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ «ՍԱՌԸ ԶԵՆՔ»

*Վրաստանի վարչական ու քրեական օրենսգրքերում նախատեսվում է կիրառել նոր դրույթ, ըստ որի ցանկացած հասարակական վայրում, նաեւ` տրանսպորտում սառը զենք կրելու համար անձը նախազգուշացվում կամ տուգանվում է 200 լարիի չափով: Եթե մեկ տարվա ընթացքում նույն անձի կողմից նման երկու դեպք է գրանցվում, ապա նա տուգանվում է 1000 լարիի չափով կամ կալանավորվում 15 օրով: Այդուհանդերձ, հետաքրքիրն այն է, որ առ այսօր հստակեցված չէ, թե իրականում ո՞րն է համարվում սառը զենք: Ավելի մանրամասների շուրջ զրուցեցինք Վրաստանի խորհրդարանի իրավաբանական հարցերով կոմիտեի փոխնախագահի Թամազ Ավդալյանի հետ.*

*- Հստակեցվա՞ծ է, արդյոք, թե ինչը կարող է համարվել սառը զենք: Օրինակ, ո՞ր տեսակի կամ ինչ չափի դանակը:*

- Ասեմ, որ իրավաբանական հարցերի կոմիտեում մենք ստեղծելու ենք հանձնաժողով, որը մշակելու է զենքը` «սառը զենքից» տարբերող չափորոշիչները: Հիշեցնեմ, որ օրենքը խախտելու դեպքում կիրառվելու է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն, այդ պատճառով հստակ կերպով պետք է թվարկվեն սառը զենքի չափորոշիչները: Նախքան օրենքի կիրարկումը, կոմիտեն եւ հատուկ հանձնաժողովը կանցկացնեն չափորոշիչները հաստատող առանձին քննարկումներ:

*- Մինչ օրս գործող օրենքով սառը զենք չեն համարվում անձնական օգտագործման իրերը, ինչպիսիք են, օրինակ` մկրատը, խարտոցը եւ այլն: Արդյո՞ք անփոփոխ կմնա այս կետը:*

- Այո, այս կետը փոփոխության չի ենթարկվել: Եթե անձնական հիգիենայի գիտակցումով այս կամ այն անձը կրում է նման իր, ապա դա արգելք չի կարող հանդիսանալ: Անձը չի տուգանվում նաեւ որսորդական սառը զենք կրելու պարագայում: Սառը զենք չեն համարվում նաեւ գյուղատնտեսության մեջ օգտագործվող գործիքները:



*- Որսորդության սիրահարներ շատ կան: Այս պարագայում խնդիրն ինչպե՞ս է կարգավորվում:*

- Եթե այս կամ այն անձը իր զենքը ձեւակերպել է օրենքի շրջանակում եւ ունի որսորդական զենք կրելու իրավունք, ապա այո, նա ունի սառը զենք (այդ թվում` որսորդական), կրելու իրավունք եւ, որ կարեւորն է` միայն այն դեպքում, երբ որսի է գնում:

*- Վերադառնանք առաջին հարցին: Երբ «Ազգային շարժում» կուսակցությունը փոփոխություններ մտցրեց օրենքում, սառը զենքը բնորոշվում էր հետեւյալ կերպ. «Դա այն առարկան կամ իրն է, որի միջոցով հնարավոր է ֆիզիկական կամ կյանքը վտանգող հարված հասցնել մարդուն»: ՆԳ նախարարի տեղակալ Լեւան Իզորիան այն եզակիներից մեկն էր, ով ժամանակին բողոքարկում էր օրենքի այս ոչ ստույգ սահմանումը: Այժմ էլ նույն իրավիճակն է: Առ այսօր հստակեցված չէ, թե ի վերջո ո՞րն է համարվում սառը զենք:*

- Գոյություն ունեն սառը զենքի շատ տեսակներ: Կան ծակող առարկաներ, դանակներ, այդ թվում` «կաստետը», որը նույնպես կարող է սառը զենք համարվել: Մի խոսքով, շատ չափորոշիչներ կան, որոնք հարկավոր է ճշտել ու գրանցել օրենքում: Այս չափորոշիչները հաստատելու համար, մենք պիտի ստեղծենք հատուկ հանձնաժողով, որի հետ միասին անցկացնենք համատեղ քննարկումներ, որպեսզի կարողանանք հստակորեն արձանագրել դրանք: Խոսակցություն է եղել շվեյցարական դանակների մասին, որոնց սայրի երկարությունը 6-8 սանտիմետր է: Բնականաբար, եթե դանակը ունի 6-8 սանտիմետր չափով սայր, ապա այն անհրաժեշտ է համարել սառը զենք: Այս ամենը լրջորեն կքննարկվի: Ի դեպ, կներգրավվի նաեւ հասարակությունը, որն ունի իր կարծիքն արտահայտելու իրավունք: Եվ անպայման հաշվի կառնենք դիտարկումները:

*- Լեւան Իզորիան հայտարարեց, որ օրենքում իրականացվող փոփոխությունները ելնում են եվրոպական երկրների փորձից: Մասնավորապես ո՞ր երկրները նկատի ուներ նա եւ ի՞նչ փորձի մասին է խոսքը:*

- Խոսքը ոչ թե եվրոպական փորձի, այլ օրենսդրության մասին է: Եվրոպական երկրների օրենսգրքերում «Սառը զենքի մասին» խոսող կետերում հստակորեն մատնանշված են չափորոշիչները: Խոսքն այն մասին էր, որ տարբերակենք, թե կոնկրետ ո՞ր առարկաներն են համարվում սառը զենք եւ մյուս երկրների նման, այստեղ նույնպես սահմանվեն արգելված իրերը: Եվրոպական երկրներում նույնպես անչափահաս, այսինքն` 21 տարեկանը չլրացած անձն իրավունք չունի կրել սառը զենք, որի տեսակները պարտադիր նշված են: Ուստի առկա օրենքը, բնականաբար, կատարյալ համարվել չի կարող: Այն պետք է զարգացնել ու առավել մանրամասն հստակեցնել, թե ո՞րն է համարվում եւ կամ ոչ` սառը զենք: Բերեմ նման մի օրինակ. գրիչը նույնպես ծակող առարկա է եւ դրանով, ինչպես եւ ակնոցի ականջակոնքով, հնարավոր է հանել մարդու աչքը: Սակայն, չէ՞ որ սրանք չեն կարող սառը զենք համարվել:

*- Փաստորեն, քանի դեռ չի սկսվել չափորոշիչները հաստատող քննարկումների գործընթացը, որի արդյունքում օրենքում հստակեցվում են սառը զենք կոչվող առարկաներն ու իրերը, օրենքը չի՞ ընդունվում...*

- Այո, քանի դեռ հստակեցված ու մատնանշված չեն սառը զենքի չափորոշիչները, ուժի մեջ է լինելու մինչ օրս առկա օրենքը:

*ՄԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ 239 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

*Վիճակագրության ծառայության նախնական տվյալներով, 2013 թվականի երրորդ եռամսյակում արտասահմանյան ներդրումները կազմել են 239 միլիոն դոլար, ինչը 3 տոկոսով գերազանցում է երկրորդ եւ 20 տոկոսով՝ 2012 թվականի երրորդ եռամսյակի ցուցանիշը:*

Արտասահմանյան ներդրումների կապակցությամբ, առաջին տեղը 20 տոկոսով զբաղեցնում են միջազգային կազմակերպությունները, 15 տոկոսով՝ երկրորդը ԱՄՆ-ը, իսկ երրորդը՝ 13 տոկոսով զբաղեցնում է Նիդերլանդները եւ Թուրքիան: Արտասահմանյան ներդրումների ամենամեծ ծավալը իրականացվել է ֆինանսական հատվածում՝ 48 միլիոն դոլար կամ ընդհանուր ներդրումների 20 տոկոսը: Երկրորդը՝ 47 միլիոն դոլարով տրանսպորտի եւ կապի ոլորտն է, երրորդը՝ 33 միլիոնով էներգետիկան:

ՎՐԱՍՏԱՆ - ԻՍՐԱՅԵԼ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



*Ավարտվեց Վրաստանի պաշտպանության նախարարի այցը Իսրայել: Երկօրյա այցի շրջանակներում Իրակլի Ալասանիան հանդիպում է ունեցել իսրայելցի իր պաշտոնակցի՝ Մոշե Յաալոնի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկել են երկու երկրների միջեւ ռազմական համագործակցության հեռանկարները:*

Ըստ Իրակլի Ալասանիայի հայտարարության՝ արծարծվել է ռազմական արդյունաբերության ոլորտում պաշտպանական հնարավորությունների եւ համագործակցության զարգացման հարցը: Հանդիպման արդյունքում ընդունված որոշման համաձայն, կմշակվի համագործակցության համատեղ պլան:

Այցի շրջանակներում Վրաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը հանդիպում է անցկացրել Իսրայելի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Յոսի Քոենի եւ Ռազմաքաղաքական բյուրոյի ղեկավար Ամոս Գիլանդի հետ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԵՍՏՐ

# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆ ՍԵՐՎԻՍ-ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԿԳՈՐԾԵՆ ՆԱԵՎ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐԵՐԻՆ

*Արդարադատության տան ժամանակավոր սերվիս-կենտրոնները կաշխատեն նաեւ հանգստյան օրերին:*

Ինչպես տեղեկացրին Վրաստանի արդարադատության նախարարությունից, հանգստյան օրերին քաղաքացիները կարող են սովորական աշխատակարգով ստանալ ավելի քան 300 սպասարկում: Շաբաթ օրերին սերվիս-կենտրոնները կաշխատեն ժամը 10-ից մինչեւ 17-ը, իսկ կիրակի օրերին՝ 10-15-ը: Միակ սպասարկումը, որից քաղաքացիները չեն կարողանա օգտվել արագացված տեմպերով (1-2 օրում), դա գործարարության գրանցումն է:

Հիշեցնենք, որ քաղաքացիների սպասարկման սերվիս-կենտրոնները գտնվում են կատարողական բյուրոյում (Դավիթ Աղմաշենեբելու ծառուղու 10-րդ կմ-ի վրա) եւ Չուբինիշվիլու փողոցի թիվ 68-ում: Արդեն պատրաստ փաստաթղթերը կարելի է ստանալ, դիմելով «Դեդա էնա» զբոսայգում գտնվող սերվիս-կենտրոնին:

Աշխատանքային օրերին Արդարադատության տան սերվիս-կենտրոններն աշխատում են ժամը 9-ից մինչեւ 21-ը:

ԳԻՆԵՍԻ ԳՐՔԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐՆԵՐ

# ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՁԵՌՔՍԵՂՄՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՌԵԿՈՐԴ

*Թուրքիայից 35-ամյա դերասան Դենիս Բարիշը եւ Երեւանի Մնջախաղի թատրոնի 32-ամյա դերասան Հովհաննես Աջինյանը ձեռքսեղմման համաշխարհային ռեկորդ են սահմանել:*

Սկսելով դեկտեմբերի 6-ին, ժամը 20:40-ին, Քուռ գետի ափին գտնվող Ռիղեի այգում՝ նրանք այդ դիրքում են գտնվել ուղիղ 43 ժամ: Աջինյանն ու Բարիշը միմյանց ձեռք բաց չէին թողնում, երբեմն միասին նստում էին բեմին դրված աթոռներին: Ժամանակ առ ժամանակ կազմակերպիչները նրանց թեյ էին հյուրասիրում ու շոկոլադ, այդ ընթացքում դերասանները շարունակում էին ձեռքը սեղմել, ինչն ավարտել են դեկտեմբերի 8-ին, ժամը 15:40-ին: Երկուսն էլ իրենց լավ են զգում, թեեւ, իրենց խոսքով, փոքր-ինչ հոգնել են: Ինչպես ավելի վաղ հայտնել է NEWS.am-ը, Վրաստանը միջոցառման անցկացման վայր էր ընտրվել «այս պահին Հայաստանի ու Թուրքիայի միջեւ հարաբերություններում կարեւոր դերի համար»՝ գործելով որպես տարանցիկ գոտի ու «կապող օղակ»:

# ԾՈՒՂՐՈՒԹՑԻ ԱՐՏԱՇԵՍԸ ԹԱԿՈՒՄ Է ԳԻՆԵՍԻ ՌԵԿՈՐԴՆԵՐԻ ԴՈՒՌԸ



*Ախալցիխեի շրջանի Ծուղրութ գյուղից 25 ամյա մարմնամարզիկ եւ բռնցքամարտիկ Արտաշես Էլբակյանը պտտաձողի (տուրնիկի) վրա 402 պտույտ կատարեց, սահմանելով նոր միջազգային ռեկորդ:*

Պտտաձողը տեղադրվել էր Ախալցիխեում, Ռաբաթի բերդի հարակից տարածքում, որտեղ երիտասարդ մարզիկը, իր երկրպագուների ներկայությամբ, ծրագրված 300-ի փոխարեն կատարեց 402 պտույտ:

Նշենք, որ նույն կարգում վերջին ռեկորդակիրը հայաստանցի մարզիկ Ռոման Շարադյանն էր, ով 152 պտույտ էր կատարել: Երիտասարդ մարզիկի կողմից ռեկորդի սահմանումը տեղի ունեցավ Թբիլիսիից ժամանած ռեկորդների գրանցման ֆեդերացիայի աշխատակիցների ներկայությամբ, ովքեր նոր ռեկորդի տեսանյութը փոխանցելու են գինեսի ռեկորդների համաշխարհային ֆեդերացիա: Արտաշեսը նաեւ ստացավ փաստը հաստատող սերտիֆիկատ ու շքանշան: Նշենք, որ Արտաշես Էլբակյանի մարզիչներն են 80-ական թվականներին բռնցքամարտի Վրաստանի չեմպիոն, ախալցիխեցի Գեւորգ Շուշանյանը եւ Ծուղրութի դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Հակոբ Սապոնջյանը:

ԵՂԱՆԱԿ

# ՁՆԱՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԼՈՒՐՋ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Առատ ձնատեղումների եւ դրա հետեւանքով երկրում ստեղծված իրավիճակի կապակցությամբ Վրաստանի կառավարությունը տարածել է հայտարարություն:*

*Հայտարարության մեջ նշվում է, որ առատ ձնատեղումների հետեւանքով Արեւմտյան Վրաստանում ստեղծված իրավիճակի կապակցությամբ, Վրաստանի վարչապետի կարգադրությամբ մոբիլիզացվել են համապատասխան գերատեսչությունները, այդ թվում՝ էներգետիկայի, տարածաշրջանային զարգացման ու ենթակառույցների նախարարությունները, Աջարիայի կառավարությունը, փրկարար ուժերը:*

Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը այսօր: Դեկտեմբերի լույս 9-ի գիշերը Վրաստանի տարածքի մեծ մասում, ձյան առատ տեղումներից հետո՝ 60-70 սմ բարձրությամբ ձյան ծածկույթ է առաջացել: Շատ շրջաններում օդի ջերմաստիճանն ընկել է մինչեւ մինուս 5-7 աստիճան, իսկ լեռնային մի քանի շրջաններում, մասնավորապես Ջավախեթիում, մինչեւ մինուս 15-20 աստիճան: Ձնակույտերն ու մերկասառույցը ոչ քիչ դժվարություններ են ստեղծել ավտոտրանսպորտի երթեւեկության համար, կենտրոնական մայրուղիների մի քանի հատվածներում բազմակիլոմետրանոց խցանումներ են գոյացել:

Ձնատեղումների արդյունքում ժամանակ առ ժամանակ փակվում են Ծալկա--Նինոծմինդա, Գուդաուրի-Ղազբեգի (Վերին Լարսի), ինչպես նաեւ Հայաստանի Գյումրի-Բավրա ճանապարհահատվածը: Դժվարանցանելի են Վանաձոր-Ալավերդի, Ալագյազ-Սպիտակ ճանապարհահատվածները, Դիլիջանի ոլորանները:

Ուժեղ սառնամանիքներ են գրանցվել նաեւ հարեւան Թուրքիայի տարածքում: Մինուս 24 աստիճան ցուրտ է գրանցվել Արարատ լեռան շրջակայքում: Էրզրումում, Երզնկայում, Բայբուրտում, Կարսում, Իգդիրում, Արդահանում գրանցվել է մինչեւ մինուս 20-25 աստիճան ցուրտ: Սաստիկ ցրտերի պատճառով Թուրքիայի հիշյալ նահանգների դպրոցներում արձակուրդ է հայտարարվել:



## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԿՍԿՍՎԵՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ

*Վրաստանի հանրային դպրոցներում ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 24-ին եւ կշարունակվեն մինչեւ հունվարի 19-ը: Այդ մասին ասված է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության մամլո ծառայության հաղորդագրության մեջ: «Ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 24-ին եւ կշարունակվեն մինչեւ հունվարի 19-ը ներառյալ»,- ասված է հաղորդագրությունում:*

*Հիշեցնենք, որ Վրաստանի դպրոցներում ուսումնական տարին մեկնարկել է սեպտեմբերի 16-ին:*

## 5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Վրաստանի խորհրդարանի պատգամավորների եւ աշխատակազմի աշխատակիցներին բնակարանով ապահովելու համար ծախսվել է շուրջ 5 միլիոն լարի: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի խորհրդարանի աշխատակազմը, Քութայիսիում պատգամավորներին բնակարանով ապահովելու համար ամսական ծախսվել է 125 062 լարի: Բացի այդ, գրեթե կրկնակի ավելի գումար է հատկացվել օրենսդիր մարմնի աշխատակազմի աշխատակիցներին բնակարանով ապահովելու համար: Մասնավորապես, այդ հոդվածով բյուջեից ամսական հատկացվել է 256 080 լարի:*

## ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՑ Է ԹՈՂԵԼ ԱՐԲԱՆՅԱԿ

*Վրաստանում աշխատանքն սկսել է առաջին ազգային արբանյակային Global TV պլատֆորմը, որի սպասարկումն իրականացվում է Eutelsat 36B արբանյակների բազայի վրա արեւելյան երկարության 36 աստիճանի դիրքում: Սկզբնական փուլում պլատֆորմի բազային մատչելի կլինեն չորս հեռուստաալիքներ: Դրանք են՝ 1TV եւ 2TV հեռուստաալիքները, որոնք պատկանում են Georgian Publik Broadcasting-ին եւ նաեւ Maestro եւ Maestro 24 հեռուստաալիքները:*

*Վրաստանում Global TV-ի գլխավոր մրցակիցը հանդիսանում Black Sea Sat պլատֆորմը, որը պատկանում է Turksat-ին եւ հեռարձակում է արեւելյան երկարության 42 աստիճանի դիրքով:*

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Վրաստանի գրողների միության եւ «Վրաստան» թերթի նախաձեռնությամբ, դեկտեմբերի 12-ին, ժամը 12-ին վիրահայ ճանաչված արձակագիր Բենիկ Սեյրանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Վրաստանի գրողների միությունում (Մաչաբելի 13) կանցկացվի մեծարման միջոցառում:

Նույն օրը, ժամը 14-ին, Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում, ուր հանգչում է դասականի աճյունը, հարգանքի տուրք կմատուցվի նրա հիշատակին:

Թբիլիսիի թիվ 104 դպրոցի տնօրինությունը, մանկավարժական կազմը եւ աշակերտությունը խոր վշտով հայտնում են վրաց լեզվի եւ գրականության վաստակաշատ ուսուցչուհի՝

***Նաթելա ԲԱԼԻԱՇՎԻԼՈՒ***

մահը եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445